

Վանիկ Վիրաբյան

պ. գ. դ., պրոֆեսոր

Խ. Աբովյանի անվան Հայկական պերական մանկավարժական համալսարան
vanik.virabyan@mail.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԱՍԱՐ-ՉԱՐԴԱԽԼՈՒՆ 1980–90-ԱԿԱՆ ԹԹ.

Բանալի բառեր. Չարդախլու-Խաչիսար, Ուտիք, Գարդման, Վ. Պետրոսյան, բռնագաղթ, գենոցիդ, տեղահանություն.

1987 թ. վերջերից հայկական Չարդախլու գյուղում ծավալված իրադարձությունները ունենում են հեռահար ծանր հետևանքներ (Chorbajian et al. 1994, 148): Ոստիկանության աջակցությամբ շուրջ 200 ադրբեջանցիներ զինված հարձակում գործեցին գյուղի վրա: Կենտրոնական իշխանության մարմինները ամեն կերպ քողարկեցին այն: Եղեռնածին իրադարձությունները կապված Ադրբեջանի իշխանությունների հայահալած-չարդարարական քաղաքականության հետ՝ բռնի հայաթափելու Գանձակի և Շամխորի, Խսակարի և այլ հայաբնակ շրջանները բնիկ հայ բնակչությունից, հանգեցրին գենոցիդի և ծանր հետևանքներ ունեցան հայկական Ուտիք-Գարդմանքի ճակատագրում: Կովկասագետ Թ. Դե Վաալի կարծիքով, այդ ամենի սկիզբը դրվեց 1987 թ. հոկտեմբերին, երբ տեղի ադրբեջանական իշխանությունների և Ադրբեջանի հյուսիսում գտնվող հոչակավոր Չարդախլուի հայ բնակիչների միջև տեղի ունեցավ բախում (The Karabagh File 1988, 62; Kuntzsch 2006, 16, 31: «Ասպարեզ», 1987, 24 հոկտեմբեր)՝ ի պատասխան գյուղի կոլտնտեսության նախագահ ադրբեջանցու նշանակման չարդախլվեցիների ցույց տված դիմադրության և Մոսկվա դիմելու (De Waal 2003, 18): Ադրբեջանը ի դեմս Չարդախլուի մեծ վտանգ էր տեսնում, համոզված, որ մարտակորով և հինավուրց հայկական գյուղի «համախմբումը վստահություն կներշնչի շրջակա հայկական գյուղերին»: Ռ. Սյունին ևս, անդրադառնալով Մ. Գորբաչովի հոչակած վերակառուցմամբ առաջ եկած երևույթներին (Sunny 2018, 481), կարևորում է 1987 թ. հոկտեմբերին հայերի նկատմամբ Ադրբեջանի սանձազերծած բռնությունների հարցը և Չարդախլու գյուղի բնակիչների ու ադրբեջանցիների միջև բախումները:

Բարձրից Չարդախլու ուղարկված 2 հանձնաժողովները անօրինական ստուգումներ անցկացրին սովխոզում, սակայն ապօրինի ոչինչ չգտան: Ի վերջո պայթեցվեց մարշալ Բադրամյանի հուշարձանը, Փառքի և աշխատանքի թանգարանը պղծվեց և վերածվեց թեյարանի, ոչնչացվեցին խաչքարերը և այլն, գյուղի բնակիչներին Ասադովի կողմից 24 ժամ տրվեց՝ անհապաղ լքելու հայրենի բնակավայրը: Գյուղի բնակիչների ջարդի կազմակերպիչ, Շամխորի շրջանի առաջին քարտուղար Ասադովը Չարդախլուի սովխոզի հայ դիրեկտոր, հրթիռահրետանային գնդի նախկին սերժանտ, Մեծ Հայրենականի վետերան, այդ օրերին պահեստագործի փոխգնդապետ Ս. Ա. Եղիյանից խլում է կուսակցական տոմսը: Ասադովի հրահրիչ-

հակահայկական գործողությունների մասին Ա.Բեքքերը փորձեց հրապարակել «Известия»-ում, որը մերժվեց և արգելափակվեց կենտրոնական իշխանությունների կողմից, գլխավոր խմբագիրը Ա.Բեքքերին աշխատանքից հեռացրեց, սակայն նյութը տպագրվեց «Сельская жизнь»-ում՝ մեծ արձագանք ստանալով: Դատապարտելով բռնությունները, նշվում էր, որ դա այն դեպքում, երբ յուրաքանչյուր 6-րդ չարդախվեցի իր գլուխը վայր էր դրել ֆաշիզմի դեմ հաղթանակում (Беккер 1987):

Արդյունքում, 1987 թ. վերջում Չարդախլուում բռնկված բախումը ազդակ դարձավ 1988 թ. ապոբինաբար ծնված և արդեն նոյեմբերին իր գագաթնակետին հասած Ադրբեջանի հայաբնակ վայրերից հայության գանգվածային բռնագաղթի համար (Txarruka 2020): Ինչպես նկատել է Ալ.Զվերևը, Լեոնային Ղարաբաղի Ինքնավար մարզից հյուսիս-արևմուտք գտնվող Չարդախլուի հայերի նկատմամբ 1987 թ. վերջին ադրբեջական իշխանությունների բռնությունները և շարդը ավելի սարսափելի 1988 թ. իրադարձությունների նախերգանքը հանդիսացան (Зверев 1996): Այդ մասին է շեշտում նաև Ջ.Օնգարովան, ասելով, որ 1987 թ. հոկտեմբերին հայաբնակ հոչակավոր հայկական Չարդախլու գյուղում բռնկվեց վեճ ադրբեջանական ղեկավարության հետ, որի ժամանակ բնակիչները ընդդիմացան պարտադրված որոշմանը, սակայն սաստիկ ծեծվեցին, տասնյակ չարդախվեցիներ ձերբակալվեցին ոստիկանության կողմից, որն ամեն գնով որոշել էր բռնի տեղահանել Չարդախլուի բնակչությանը (Ongarova 2017, 38): Ադրբեջանցիները չխորշեցին և անգամ պղծեցին Հայրենական Մեծ պատերազմում որպես «Կարմիր գեխետդներ» հոչակված չարդախվեցիների պապենական գերեզմանը, այն ավերվեց և վարելահողի վերածվեց:

Խնդիրը պատճառահետևանքային խոր կապերի մեջ հայտնվեց Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի համալիր բնույթ կրող հիմնահարցի հետ: Իրագործվեց գենոցիդ՝ հայ ազգաբնակչության բռնի տեղահանումը հարազատ բնակավայրերից, որը դատապարտվում է միջազգային օրենքներով, ՄԱԿ-ի 1948 թ. հիմնարար կոնվենցիայով (Հայոց պատմության հիմնահարցեր 2000, 442–443): Այդուհանդերձ, իրադարձություններն իրենց գաղափարական աղավաղված հիմնավորումը գտան նույնիսկ ՀՀ մտավորականության մի շարք ներկայացուցիչների անպատասխանատու, հակապատմագիտական հրապարակումներում: «Հայրենի» գրող Վ.Պետրոսյանը «Խորհրդային Հայաստան» թերթում գետեղեց մի չարաբաստիկ հոդված «Վերաբնակիչ..., փախսարական..., գաղթական..., հայրենասիրձ» վերնագրով, որը իրապես պատմաքաղաքական իրողությունները նենգափոխելու փորձ էր՝ խիստ հակագիտական ուղղվածությամբ, որը նենգափոխում է արդեն վաղուց հայագիտության կողմից քաղաքացիություն ստացած տեսակետները և հայեցակարգերը: Պատմագիտական խեղաթյուրման միջոցով հեղինակը փորձել է հավասարության նշան դնել «գաղթական» և «հայրենասիրձ» հասկացությունների միջև և դեռ հանդիսավոր սնապարծությամբ նշում, որ հարազատ բնակավայրերից հայ ազգաբնակչության բռնի տեղաշարժը «պիտի լիներ նաև՝ անկախ Լեոնային Ղարաբաղի դեպքերից: Նրանք պիտի գային-լցվեին Հասարան» և այդ երևույթը որակում է որպես «հայրենասիրձություն»: Վ.Պետրո-

սյանը, անտեսելով այն պատմաքաղաքական ծանրակշիռ հանգամանքը, որ, ինչպես ինքն է ընդգծում, «*նրանց պատերը-նախապատերն են ապրել այդ վայրերում, ապրել են անհիշելի ժամանակներից և նրանք շար ավելի էին բնիկներ, քան քարտեզի այսօրվա տերերը*», որն «*իրենց ժողովրդի պատմական հայրենիքն էր քարտեզի այսօրվա տերերի աշխարհ գալուց շար հարյուրամյակներ առաջ*», հայ բռնագաղթյալներին միանգամայն անհիմն համարում է *հայրենադարձներ*: Հեղինակը դրանով ավակողմնորոշում է հայ և ոչ հայ հասարակայնությանը, բռնագաղթը նենգափոխելով «*հայրենադարձություն*» հասկացությամբ, և հիմնագուրկ եզրահանգում, որ աղբբեջանցիներն էլ տեսան, որ ազգաբնակչությունը ետ չի վերադառնում, որ «*նույնիսկ առասպելական այն գյուղը, որ երկրին երկու մարշալ էր տվել, արմատահան եղավ-փախավ այդ «եղբայրությունից»*» (Պետրոսյան 1989): Դա ծանր հարված է հայ պատմագիտության կողմից ձևավորած մեկնակետային տեսակետներին: Դա ակնբախտրեն վկայում է Վ. Պետրոսյանի և այլ հեղինակների ոչ հայամետ և հակագիտական դիրքորոշման, բայց ոչ ամենին ազգամիջյան հարաբերությունների ողջ բարդոյթի ճշմարիտ ըմբռնման մասին: Հեղինակը արհեստականորեն նախապատրաստված բռնագաղթերին տուրք տվողների դասին է պատկանում, որոնք դեռևս շարունակում են քողարկել Հայոց Հայրենիքի «Արցախ» և «Ուտիք» աշխարհների բնակավայրերից (Ուլուքաբյան 1994) բռնի տեղահանված հայության մասին ճշմարտությունը: Կեղծ հայրենասիրություն են բեմադրում՝ դժվարացնելով ռազմավարական համալիր բնույթի ծրագրերի իրագործումը, հիշեցնելով Ֆրանսիական Մեծ հեղափոխության «*ճահճի» մեջ նսարածներին՝* բոլորից բարձր ու միանգամայն ոչ տեղին բարձրաձայնելով ազգային «արժեքների» և չտարած հաղթանակների մասին:

Չարաբաստիկ բռնագաղթերի իրականացման դեռ սկզբում հարազատ բնակավայրերը լքեցին ավելի քան 213 հազար հայեր կամ շուրջ 56 հազար ընտանիք (Վարդանյան 2020), որոնց թիվը 3 տարվա ընթացքում հասավ 450 հազարի: 1988 թ. Սուճալիթի ցեղասպանությանը հաջորդեցին Կիրովաբադից (Գանձակ), Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից, Շաքիից և հայաշատ այլ բնակավայրերից հայ բնակչության բռնի արտաքսումը: 250 հազար հայ, թողնելով իրենց հազարամյա բնօրրանը, եկեղեցիները, նախնիների գերեզմանները, սփռվեցին աշխարհով մեկ: Բռնագաղթվածների երկրորդ ալիքն սկսվեց 1990 թ. հունվարի Բաքվի ջարդերից հետո, երբ հարյուրավոր հայեր սպանվեցին Աղբբեջանի մայրաքաղաքում, և ևս 200 հազար հայ ստիպված եղան բռնագաղթել (Առաքելյան, Խառատյան 1989; Միմոնյան 1989):

1988 թ. դեկտեմբերի 4-ին ելույթ ունենալով հայկական հինավուրց Գանձակ քաղաքի եկեղեցու բակում՝ Գ. Օգանեզովը փաստել էր, որ տեղի էր ունեցել ամեն մի հայի սրտին հարազատ Չարդախլուի բնակչության բռնի տեղահանությունը, մարշալներ Բաղդամյանի, Բաբաջանյանի և Խոթրիդային Միության այլ հերոսների հայրենիքը հայազրկելու և տեղահանելու ցեղասպանական ծրագիրը, նշելով, որ արդեն 50 տոկոսը բռնի արտաքսված է (Самсоборова 2014, 291–292): Իսկ ՀՀ իշխանությունները, ունենալով որոշակի փոխպայմանավորվածություն Աղբբեջանի հետ, անթաքույց պատրաստակամություն դրսևորեցին և արդյունքում Ու-

տիք նահանգի Շամխորի, Դաշքեսանի և այլ շրջանների հազարավոր հայեր, առանց դիմադրության բռնագաղթվելով, հանգրվանեցին օտար ավերում՝ կրելով դառնաշունչ գաղթական անվանումը: ՀՀ իշխանությունների նման մտայնությունը բխում էր Հայաստանը միատարր բնակչություն ունեցող երկիր դարձնելու ռազմավարական ելակետից, սխալմամբ ենթադրելով, որ այն կնպաստի հանրապետության անվտանգային հիմնախնդիրների լուծմանը:

1987 թ. աշնան Չարդախլուի ողիսականը հանդիսացավ ապագա չարաղետ իրադարձությունների նախերգանքը: Հաջորդող դեպքերը 1991 թ. ապրիլ-օգոստոսին հանգեցրին ՀՀ համար խիստ անցանկալի և աննպաստ հետևանքներ ունեցող տխրահոչակ «Օղակ» բազմահամալիր գործողությանը, որն իրագործվեց Խորհրդային ռազմաքաղաքական ղեկավարության և Ադրբեջանի ՆԳՆ ուժերի համատեղ պատժիչ գործողությունների միջոցով: «Օղակ» գործողությունը Արցախի և Ուտիքի հայության դեմ ուղղված բացահայտ ազգային-էթնիկական գտում էր, որի հետևանքով մասնավորապես Արցախի և Գարդմանք-Ուտիքի հայաշեն և հայաբնակ բնակավայրերը արմատախիլ եղան հայրենի հողից: Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ ներքին պատերազմում կրեց հետագա հեռահար հետևանքներ ունեցող ռազմաքաղաքական ծանր պարտություն: Իսկ արդեն 1991-1994 թթ. Արցախը և Հայաստանը, կարծես թե, տպավորիչ հաղթանակ տարան Ադրբեջանի դեմ պատերազմում, սակայն ոչ մշտական և ոչ կայուն զինադադարով ավարտված հակամարտությունը նոր հակասական «*նաղենիշներ*» ձեռք բերեց: Ձեռքբերված հրադադարը, անկասկած հիշեցնում է բրիտանա-ֆրանսիական պարտադրանքով հաստատված և Արցախի վզին փաթաթված իբր թե ժամանակավոր 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը, որով բրիտանական թուրքամետ գեներալ Վ. Թոմսոնը Ղարաբաղ-Արցախին հարկադրեց ընդունել հայատյաց, արյունարբու դոկտոր Խոսրով-բեկ Փաշաբեկ-օղլի Սուլթանովի ռեժիմը՝ մինչև իբր թե Փարիզի խաղաղության Վեհաժողովի կողմից արդարացի և իրավարար վճռի կայացումը, ինչը բացահայտ խաբեություն էր, որը Ս. Վրացյանը ըմբռնել էր, եզրահանգելով, որ Սուլթանովը իրավունք ուներ հպարտանալու, որովհետև, թեև ժամանակավոր կերպով, Ղարաբաղ-Արցախը դառնում էր Ադրբեջանի մաս, և ադրբեջանցի գործիչները չէին հրաժարվում ժամանակավորը մշտական դարձնելու սկետուն մտքից (Վրացյան 1993, 341): Այն ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից հարցի անհամարժեք լուծում էր:

Այն գործնականում նպաստեց այդ քաղաքականության շարունակականությանը արդեն ՀՀ անձնատվությունից հետո 2020 թ. աշնանային կապիտուլյացիոն ջախջախիչ ադրբեջանա-հայկական պատերազմում, որով շարունակվեց Արցախի հայաթափման ազգասպան նախկին քաղաքականությունը, իսկ ամեն ինչ սկսվեց 1987 թ. աշնան հայկական Խաչիսար-Չարդախլուի հայաջինջ-ազգասպան բախումներից, որի դեմ Ադրբեջանն ուղղեց իր ողջ ներուժը: Իսկ 1991-1994 թթ. պատերազմն ավարտվեց ԵԱՀԿ-ի Մինսկի խմբին ապավինած ՀՀ իշխանությունների սնամեջ բանակցաընթացքով, անուժ պայմանավորվածություններով. Հայաստանի Հանրապետությունը ետ վերադարձրեց իր իսկ կողմից որպես «Գրավյալ տարածքներ», «Օկուպացված տարածքներ» և «Անվտանգության գոտի» անվան-

ված տարածքները: Մոռացության մատնվեց, որ Չարդախլուում և Ուտիք-Արցախի հարյուրավոր այլ հայկական բնակավայրերում նրանց նախնիներն ապրել են բազում հարյուրամյակներ, առավել ևս, որ ներկայումս ադրբեջանական պատմագիտությունը ակտիվորեն զբաղված է Սյունիք-Արցախի և Ուտիքի հին և նորագույն պատմության, Հայոց ազատամարտի ուտիք-արցախյան էջերի նենգավոխմամբ (Mystraֆա 2019; Mustafa 2019, 1–18; Mystraֆա 2012, 400–403):

Հայկական Չարդախլուի ցեղասպանական ողիսականը ունեցավ որոշակի ավարտ: 1988–1889 թթ. Չարդախլուից (Խաչիսար) բռնագաղթվեցին մեծ թվով հայեր, որոնց մոտ 60 տոկոսը հանգրվանեց ՀՀ Տավուշի մարզկենտրոնից 60 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Քյորփուլու (Քյորփըլու) նախկին ադրբեջանական գյուղում, որը Ջորական է վերանվանվել 2006 թ. հուլիսի 4-ին (Ջորական): Այդ մասին բազմանշանակ փաստում է ներկայիս ՀՀ Երկրապահ միավորման ղեկավար Ս. Միքայելյանի քույրը՝ Ֆ. Միքայելյանը. «Արցախյան շարժման առաջին իսկ օրից Սասունը առաջինը տասնյակ մեքենաներով՝ կյանքը վտանգելով, դեռ 1988 թ. մեկնեց Շամխորի շրջանի Չարդախլու, Գետաբակ, Բաղա, Ջազիր գյուղեր և այդ գյուղերի բոլոր բնակիչներին «ազատեց նոր եղեռնից», բերեց Հայաստան» (Հայկական ժամանակ 2010, 6 մայիսի), ինչպես 2020 թ. Արցախյան պատերազմի օրերին, երբ գրեթե ողջ հայ բնակչությունը «առանց հապաղելու» արագ «տեղավոխվեց» Հայաստանի Հանրապետություն: Ջորականում բնակություն հաստատեցին Չարդախլու գյուղից եկած 310 և Շահումյանի շրջանից բռնագաղթված 12 ընտանիքներ, որտեղ ներկայումս կա 300 տնտեսություն՝ շուրջ 1400 բնակիչներով: Փոխարենը՝ Քյորփըլուի ադրբեջանցիները հաստատվեցին հայկական Գարդմանքի Չարդախլու գյուղում, որը վերանվանվեց Չանլիբեյ (ադրբեջաներեն՝ Çənlibel) (Ջորական-Տավուշի մարզ): Սակայն ինչպես տեղին նկատում են ազգագրագետներ Լ. Աբրահամյանը և Ա. Դաբաղյանը, տեղանվան լեզվական պատկանելիությունը իր տեղը զիջում է բնակչության անցյալի առաջ, ինչպես օրինակ նախկին հայկական Չարդախլու գյուղի պարագայում, որի հայկական բնակչությանը 1988 թ. փոխարինեց ադրբեջանականը և գյուղը վերանվանվեց Չանլիբեյ («Մշուշոտ լեռ», որը թուրքական էպոսում նույնպես դիտարկվում է որպես մտահնար թուրքական «Միջնաբերդ» ձևով, և լեզվաբանորեն ունի թուրքական անվանահիմք («Կտուրներ»): Իսկ Ջորականում հաստատված չարդախլուցիների մի մասը իր ժամանակին դիմել է ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին խնդրանքով՝ Ջորականը վերանվանել Նոր Չարդախլու, ինչը մերժվել է, պատճառաբանություն է բերվել, թե Չարդախլուն հայկական տեղանուն չէ, ինչը միանգամայն ճիշտ մտեցում է եղել, քանզի իրողությունների կեղծ պատրանք է ստեղծում և միանգամայն անընդունելի քաղաքական-պատմագիտական մտեցում է: Ակնհայտ է, որ համանման գյուղերի հայ փախստականների կողմից թուրքական ձևերին գիտակցաբար տուրք տալը (Abrahamian 2006, 45-46; Dabaghyan 2011, 415; Azərbaycanская ССР 1964, 45-46), ինչպես դա փորձեցին անել Տավուշի մարզում՝ Ջորականը վերանվանվել Չարդախլու հինավուրց Խաչիսարի փոխարեն, հանգեցնում է անցանկալի ձևախեղումների, ինչպես դա եղել է Լենինականի վերանվանմամբ, երբ այն փոխարինվեց «Գյումրի» թուրքական ձևով, այն դեպքում, երբ ընդունելի է «Կումայրի» հայկա-

կան ձևը, որը հայկական արմատներ ունեցող տեղանուն է: Եվ այսպես, Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության արդյունքում հայկական Խաչիսար-Չարդախյուն դադարեց հայկական լինելուց, իսկ նրա հայ բնակչությունը դարձավ փախստական, ակնկալելով, որ մի օր կրկին կվերադառնա հայրենի բնակավայրը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ, ԽԱՌԱՏՅԱՆ 1989 – Առաքելյան Հր., 1989, Խառատյան Զ., Հայացք փախստականության պրոբլեմին, «Խորհրդային Հայաստան», Երևան, 19 սեպտեմբերի, № 220:

ԱՄՊԱՐԵԶ 1987 – «Ասպարեզ» օրաթերթ, 1987, Գլենդել, 24 հոկտեմբերի,:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 2000 – Հայոց պատմության հիմնահարցեր, 2000, Հր. Սիմոնյանի խմբագր., Երևան, ԵՊՀ հրատ., :

ՀԱՅՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ 2010 – Միքայելյան Ֆ., 2010, Արծիվները պետք է ազատ լինեն «Հայկական ժամանակ», Երևան, 6 մայիսի, № 83:

ՊԵՏՐՈՍՅԱՆ 1989 – Պետրոսյան Վ., 1989, «Վերաբնակիչ... փախստական... գաղթական... հայրենադարձ», «Խորհրդային Հայաստան», Երևան, 17 օգոստոսի, , № 196:

ՄԻՄՈՆՅԱՆ 1989 – Սիմոնյան Հր., 1989, Ազգամիջյան լարվածության ակունքներում, «Խորհրդային Հայաստան», Երևան, 20 սեպտեմբերի, № 221:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2020 – Վարդանյան Ա., 2020, Ադրբեջանից բռնագաղթած հայերի հարցի լուծումը մտել է նոր փուլ, «Հայաստանի Հանրապետություն», 25 հուլիսի, № 138:

ՎՐԱՅՅԱՆ 1993 – Վրացյան Ս., 1993, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան»:

ՈՒՆՈՒԲԱԲՅԱՆ 1994 – Ուլուբաբյան Բ., 1994, Արցախի պատմություն, սկզբից մինչև մեր օրերը, Եր., «Մ. Վարանդյան» հրատ.:

ABRAHAMIAN 2006 – Abrahamian L., 2006, Armenian Identity in a Changing World. Costa Mesa, CA: Mazda Press.

DABAGHYAN 2011 – Dabaghyan A., 2011, Place Renaming Practices In Post-War Karabakh/ Artsakh, Acta Ethnographica Hungarica, 56 (2), 403–427 (2011) DOI: 10.1556/AEthn.56.2011.2.9 (03.10.2021–16.00)

CHORBAJIAN et al. 1994 – Chorbajian L., Donabedian P., Mutaflan Cl., 1994, The Caucasian Knot. The History of Nagorno-Karabagh (Politics in Contemporary Asia), London-New Jersey. Zed books.

KUNTZSCH 2005 – Kuntzsch Felix, 2005, Die Gewalteskalation des Konflikts um BergKarabach: “TragΦdie” oder “Ressource”?, Berlin, p. 16, 31: [DE WAAL 2003 – De Waal T., 2003, Black Garden, Armenia and Azerbaijan through Peace and War, New York University Press, New York and London,](http://Stiu soar.info/ssoar/bitstream /handle/ document/44004/ssoar-2006-kuntzsch-Die_Gewalteskalation _des_ Konflikts_um.pdf;jsessionid= 53BBD342C4E5C33BFD1F403A5 E714EDF?sequence=1 (13.06. 2021–20.00)</p>
</div>
<div data-bbox=)

TXURRUKA 2020 – Jesús Pérez de Viñaspre Txurruka, 2020, Karabakh Garaiko auzia (2). Autonomiatik independentziara (1988–1994).

SUNY 2018 – Suny R.Gr., Nationalism And Democracy In Gorbachev’s Soviet Union: The Case Of Karabagh, Michigan Quarterly Review: vol. 28, No. 4, 2018, 481.

THE KARABAGH FILE 1988 – The Karabagh File, Documents and facts on the region of Mountainous Karabagh 1918–1988: The Zoryan Institute For Contemporary Armenian

Research & Documentation, Gerard J. Libaridian Editor First Edition, Cambridge-Thronto, March, 1988, 62.

NAZIM 2019 – Mustafa Nazim, Azərbaycan Cumhurbəşkanlığı Kütüphanesi Bölüm Başkanı, 2019, 1-18: Blog № 69 (11.12.2021-21.00).

АЗЕРБАЙЖАНСКАЯ ССР 1964 – Азербайжанская ССР: Административно-территориальное деление. 1964, Баку, 45-46:

БЕККЕР 1987 – Беккер А., У прошлого в плену, «Сельская жизнь», Москва, 24 декабря 1987, № 294:

ЗВЕРЕВ 1996 – Зверев А., Этнические конфликты на Кавказе, 1988-1994 гг., 1996 :<http://poli.vub.ac.be/publi/ContBorders/rus/ch0102.htm>: https://www.vub.be/sites/vub/files/nieuws/users/bcoppet/139_glava_i.pdf. (15.06.2020–22.00):

САМООБОРОНА АРМЯН 2014 – Самооборона армян Кировабада в 1988-1989 гг. глазами очевидцев, 2014, 25-летию самообороны армян Кировабада посвящается, Ер.; Изд-во «Гитутюн» НАН РА, 2014, 291-292. (02.10.2021-22.00)

НАЗИМ 2019 – Мустафа Назим, Процесс объединения Нахиджевана и Азербайджан в Зенгезуре в Армении – 11.12. Блог №: 2019/69: <https://avim.org.tr/Blog/Nahcivan-Ile-Azerbaycan-I-Birbirinden-Ayirmak-Uzere-Tertiplenen-Zengezur-Un-Ermenistan-A-Katilma-Sureci-11-12-2019>. (06.10.2020-22.00)

НАЗИМ 2018 – Мустафа Назим, Азербайджанская Демократическая Республика: яркая страница в истории государственности Азербайджана, Материалы международной конференции. 26-30 июня 2018г., 400-403: [Stiu 1905.az/abdurrəhim-bəy-haqverdiyevə-qarsiermənistan-hokumətinin-təskil-etdiyi-quldurluq-hadisəsinin-təfsilati/](http://Stiu.1905.az/abdurrəhim-bəy-haqverdiyevə-qarsiermənistan-hokumətinin-təskil-etdiyi-quldurluq-hadisəsinin-təfsilati/): nkaa.ru/v-gyandzhe-proxodit-mezhdunarodnaya-nauchnaya-konferenciya-na-temu-adr-yarkaya-stranica-istorii-gosudarstvennosti-azerbajdzhana/ (25.05.2021-22.00)

<https://hy.wikipedia.org/wiki/Ջօրսլաւս>: <https://mil.am/ru/news/3453>: <https://jam-news.net/am/> (13.06.2021-20.00)

Ջորսլաւս-Sաւոյնի մարզ, <https://papikqocharyan.wordpress.com/2016/12/> (13.06.2021-20.00).

Ջորսլաւս, <https://hy.wikipedia.org/wiki/Ջօրսլաւս>: <https://mil.am/ru/news/3453>: <https://jam-news.net/am/> (13.06.2021-20.00)

Vanik Virabyan

Dr. Habil.

Armenian State Pedagogical University After Khachatur Abovyan

vanik.virabyan@mail.ru

ARMENIAN KHACHISAR-CHARDAKHLU IN 1980–1990

Keywords: Chardakhlu, Utiq, village, Gardman, V. Petrosyan, violent migration, genocide, deportation.

This ancient Armenian village was known as Khachisar in the Middle Ages. The policy of eradicating the people of Chardakhlu from Khachisar-Chardakhlu became the key point of Azerbaijan's strategy. Because it paved the way not only for the forcible deportation and genocide of the Armenian population of Shamkhor, Dashkesan, Khanlar, and other regions, but also for the destruction of the collective symbol of the Armenians, embodied by Khachisar-Chardakhlu, the glorious village of marshals and brave warriors. It was the pillar of the Armenian settlements, the impregnable shelter. It also laid the groundwork

for Azerbaijan to gain a foothold in 2020 after the defeat of the first Artsakh war in the 1991–1994 war, to destroy the real bearers of the Kur-Araks culture which was paid tribute to in the Republic of Armenia.

However, since the end of 1987, the events in the Armenian village of Chardakhlu have had far-reaching consequences. Moreover, many representatives of the Azerbaijani historical-political science are actively engaged in the gross and open falsification of the ancient and modern history of Syunik-Artsakh and Utik, the Utik-Artsakh pages of the Armenian liberation war.

Ваник Вирабян

Д. и. н.

Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна
vanik.virabyan@mail.ru

АРМЯНСКИЙ ХАЧИСАР-ЧАРДАХЛУ В 1980-1990 ГГ.

Ключевые слова: Чардахлу, Утик, Гардман, В.Петросян, микрогеноцид, геноцид, депортация.

Это древнее армянское село в средние века было известно как Хачисар. Политика искоренения чардахлу из Хачисар-Чардахлу стала целью стратегии Азербайджана. Он подготовил почву не только для насильственной депортации и геноцида армянского населения Шамхора, Дашкесана, Ханлара и других регионов, но и для уничтожения со-бирательного символа армян, воплощенного Хачисар-Чардахлу - деревня славных маршалов и доблестных воинов, которая была столпом всех соседних армянских поселений, неприступной цитаделью и убежищем. Позже он заложил основу для того, чтобы в 2020 году после поражения в первой Арцахской войне в 1991-1994 годах Азербайджан смог закрепиться, чтобы уничтожить настоящих носителей культуры Кура-Аракс, которой воздавали должное в Республике Армения.

Однако с конца 1987 года события в отдаленном армянском селе Чардахлу имели серьезные последствия. Более того, многие представители азербайджанской историко-политической науки активно занимаются открытой фальсификацией древней и новейшей истории Сюник-Арцах и Утик, утик-арцахских страниц армянской освободительной войны.